

Упс. Рисунок.

Живопись



1918р

2162

ՍԻՄ. ԲԱԲԻՆԵԱՆ

ԱԿԿՈՐԴՆԵՐ

ԹԱՆԱԱՑԵԼԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ Ա ԴՐՁՈՑԿ

26 FEB 2013

01 JAN 2009

10 NOV 2011

891.99

F-13

ՍԻՄ. ԲԱՐԻԵԱՆ

ԱԿ.

ԱԿԿՈՐԴՆԵՐ



ԲԱՆԱԱՏԵՎԱՆՈՒԹԵՒՆՆԵՐԻ II ԳՐՔՈՅՑ



Տպարան «Եիրակ» Այէհօնդրապոյ

1911

22850

ARMENIAN LIBRARY
YEREVAN, ARMENIA

ARMENIAN LIBRARY
YEREVAN, ARMENIA

ԲՆԱՒԹԵԱՆ ՀԵՏ

Հալուսմ են, հալուսմ և ձիւն, և սասոյց,
Հըզօր թափերով թաւալում գետեր:
Դրանում պառկած՝ հիւանդ, զօրալոյծ,
Ես աչք եմ ուղղել դէպի լուրթ եթեր:

Դալուկ աչերիս իջնում է թմրիր,
Եւ լսում եմ ես՝ կէս-քուն, կէս-արթուն,
Գարունն է գալիս շողքով լուսասփիռ,
Երգով կենսառաք, երգով զըւարթուն:

Ինձ երազիս մէջ ժալտում են արտեր,
Թաւշեայ կանաչով ժալտում ծառ ու տունկը,
Եւ արքայական ու փարթամ վարդեր
Խօսուն հաւքերին խնկում են բուրմունք:

Ինձ գարնան հըզօր երգն է արթնացնում.
Դրանիս ճեղքից նայում է արփին:
Ես իմ ոյժերով ստքի եմ կանգնում,
Ես զգում եմ ինձ յարութեան ճամբին...

ԱՐԾԻԻ ՄԱՀԼ

Վըպատ լիոների փառաւոր արքան —
Արծիւն էր ճախրում եթերում ազատ
Եւ գագաթներին սէդ, հըսկայական
Բազմում էր վըսեմ, ինչպէս պայազատ:

Բայց նենգ որսորդի գնդակն անզդայ
Նրա ճախրանքին վերջ որից յանկարծ —
Որպէս տապալւած հոյակապ հըսկայ՝
Նա յաւէտ թողից գահը երկնաբարձ:

Եւ ջարդւած թևով, արիւնաշազախ,
Մի ժայռի վրայ ընկաւ կիսաշունչ.
Աչքն ուզգեց դէպի երկինքը խաղաղ
Ու երկար, երկար նայեց լուս ու մունջ:

Եւ մղձաւանջոտ վերջին տափնապում
Ողբաց իր ապատ կեանքը բարձունքի.
Իսկ արփին թմրիչ շողք էր թօթափում,
Երբ ժայռն էր թրջում կաթիլն արցունքի...

ԱՌԱԽՕՏԵԱՆ

Լեռան գլխից ոսկի թափեց
Կոյս արփին.
Ծառ ու ծաղիկ զւարթացան
Լճափին.
Լի թարմութեամբ խայտաց անուշ
Զեփիւսիկ.
Լիճը զարթեց, շարժւեց անծուփ
Ու լոիկ:
Միայն ափի ժայռը մնաց
Մտայոյզ.
Հեռւի լեռան նայեց տխուր
Ու անյոյս.
Դարձեալ յիշեց սրտի խորին
Հառաչով,
Ինչպէս մի օր գահավիժւեց
Շառաչով,
Ինչպէս զրկւեց վսեմ կհանքի
Հրապոյրից —
Գագաթների արշալոյսի
Համբոյրից...

ԱՃՆԱՆԱՑԻՆ ԱԿԿՈՐԴՆԵՐ

Տերեթափ անտառ, պարտէզ ու այդի,
Հովհաններ թարշամ

Լացին, ողբացին իրանց հըմայքի
Մահը վաղաժամ,

Մըշուշներն իջան ձորերը խորունկ
Ու ոլորւեցին,

Եւ ամբողջ գիշեր արագիլ, կոռունկ
Շարշար չըւեցին:

Եւ յորդ անձրիներն իրանց թանձրաշերտ
Ծածկոյթի ետև

Թագցրին անցեալի փառքը հրաշակերտ
Ու շողուն արհ:

Սողացին երկար, սկ գիշերների
Շարքերն անհամբոյը,

Յած, աւելի ցած իջաւ թիսկերի
Հոյլը սեաթոյը...

Պաղ լնդարմացման մոայլ տաճարում
Հանգել են աստղեր,
Ու հողմն է միայն լալիս ու գոռում
Մրտամաշ տաղեր:

Եւ ես չեմ վնդրում մթում խօլական
Անցեալի մի շող.
Հաստատ քայլերով իջնում է ներկան
Անփունդը քարշող...



* * *

Հեռացէք, վախէք տափարակներից
 Ու բնակւեցէք գոռ լեռների մօտ
 Եւ մի հեռանաք ժայռոտ ափերից,
 Որ ծովի երգին չը մնաք կարօտ:

 Հովհանների մէջ, լեռների լանջին՝
 Ծովի հարսան, մօտիկ ապրեցէք,
 Անսացէք գոռող, սէկ արծւի կանչին,
 Խրոխտ գագաթներին միշտ թափառեցէք:

 Տափարակներում ոչինչ վեհ չը կայ.—
 Թող չը մանրանայ այնտեղ ձեր ոգին,
 Թող ձեղ մեծացնեն լեռները հսկայ
 Իրանց զրկերում սիրով կաթողին:

 Թող օրօր երգէ ձեղ ծովը հպարտ՝
 Ժայռերի վրայ զբոհ տալով ահեղ,
 Անտառն էլ՝ թաւուտ ու շքեղազարդ,
 Առակների հետ երգէ փառահեղ:

 Եւ արծւի նման աղատ ճախրեցէք
 Մտքով դէպի վեր, դէպի ջինջ կամար,
 Վսիմ բնութիւն զրկում փնտրեցէք
 Դերագոյն հրճանք ձեր ոգու համար...

ՍԵՒ ԾՈՎՔ

Մանիշակագոյն շղթան լեռների՝
 Զգւած եւքսինեան ծովի հզերքին՝
 Անսում է անյագ հրաշափառ տարրի
 Յաւերժ սիրելի հոգեթով երգին:

Բուքն է, թափ առած, անցնում սարերով,
 Կայծակն է ճայթում ամառայ տապին,—
 Անյողդողդ Եայլան կուսակման սիրով
 Ծովին է լուսմ լուռ կանգնած ափին:

Եւ տարբը հըզօր երգում է երգում
 Իր շքեղափառ, անեղծ երգերից.
 Ալիքներն ափի ժայռերն ին զրկում,
 Շաղ տալիս գոհար ու փախչում նորից...

ԵԱԼԹԱՅՑՈՒՄ

Խաղաղ եղերք, լուս երեկոյ,
Կիսաշուք.
Ալեակն ափին սէլն է պատմում
Կամացուկ.
Ճոլք են թափում վերից աստղեր
Ու լուսին,
Լոյսեր վառում ծովի կնճռոտ
Երեսին...

Քամին զարթեց... Ամբողջ գիշեր
Ծոցի մէջ
Կը կատարեն նաւերն անկամ
Ել և էջ.
Մինչ ուշ գիշեր սարալանջին
Ծաղկազարդ
Ես կը յածեմ հոգւով ուրախ
Ու զըւարթ...

ԵԱԼԹԱՅՑԻ ՄՕՏԵՐՔԸ

Եղերքը քիշ-քիչ կորչում է հեռուում...
Փարոսի կարմիր կըրակն է վառում...
Մութ Այու-դաղի կոնակի վերայ
Շուտով անմեկին լոյսը կ'երերայ,

Անծայր, անսահման Եւքսինն՝ իմ գիմաց՝
Իր երկն է դարձեալ հնչեցնում կամաց,
Կենդանացնելով յուշեր անցեալի
Տարօրէն ախորժ թախիճներով լիւ

Եւ՝ ընկերակցած թարմաշունչ հովին՝
Օրօր է ասում մահիկը ծովին.
Ծփանքն էլ ափին պաչեր է բաշխում,
Ճերմակ վրփուրով եղերքը նաշխում...

Ես՝ մենակ նստած անդորր եղերքին՝
Կ'անսամ Պոնտոսի հրաշափառ երգին,
Մինչև երազուն հանգստին հասնի
Կանաչին տըւող մանզաղը լուսնի...

ՃԱՄԲԻՌ

1.

Յածելով վիթխարի, երկնաբարձ լիռների
Դըժւարանց, ահաւոր կիրճերում,
Քեզ, արծիւ, սիրեցի, և երկար դիտեցի
Քո ճախրեն անսահման եթերում:

Հէյ, արծիւ, երնէկ քեզ, որ կիրճում
արեկէզ
Ինձ նըման չես գընում զօրալոյժ.
Դու ճանգիստ ու աղմտ, որպէս սէզ
պայտապատ,
Լոկ զիտես քո դահոյթն անմատոյց:

Սաւառնէ, սաւառնէ. թող ողիս ոյժ առնէ
Նայելով քո հըզօր թըռիչքին.
Եւ եղիր ուղիկից, քանի դեռ արգելքից—
Այս կիրճից չէ ելել թափառող իմ
ողին...

2.

...եւ քայլամոլոր երկար թափառած՝
Մի խաղաղ գաշտում ընկայ ցանի մօտ.
Երեկոն պայծառ աստվիկներ վառած,
Թաղցնում էր գաշտի անողերն ու արօտ...

Ես ամբողջ գեշեր անյագ ծըծեցի
Բուրմունքը անծայր, կանաչ ովկեանի.
Հովը խաղալիս՝ դիւթւած լսեցի
.Հոգիս փայփայող շրշենը ցանի:

Կաշտի աշխոյժից ցնծաց իմ ողին,
Հղուաց մի կորով, որ վաղուց չուներ.
Եւ ճամբայ ընկայ ես լուսածագին
Դէպի նորանոր անյայտ հեռուներ...

3.

Անագին լուսնկան ահա շիկամած
Յամբօրէն ըարձրացաւ պարտ հորիզոնից.
Ալեակներն ափի մօտ ծփացին կամաց,
Զըլատւած վերահաս տեղատւութիւնից:

Եւ ըանի լուսնկան վերև է լողում,
Լուսննողին աւելի չքնաղ է դողում,
Իսկ շուտով լուսնի տակ պայծառ զծերով
Հրապուրիչ կը ցոլան ափերն անխըռով:

Ես այստեղ կը ննջեմ, ժայռի զազաթին,
Հրաշափառ տարերքի վեհ օրօրի տակ,
Եւ հէնց այգն իր շողբով հըպի իմ այտին,
Վերըստին կը ճեղքեմ ծովը կապուտակ...

4.

Խաղաղ ափի մօտ ալեակն է հրկում
Իր յաւերժական թովիչ երգերից.
Ես՝ մենակ ընկած աւաղի գրկում
Լսում եմ, բուժում սրտիս վէրբերից...

Ա՛խ, սիրաս զալուկ, սիրտս վիրաւոր
Վաղուց էր տենչում ծովը հրաշափառ,
Վաղուց էր ըղձում անսահման անգորր,
Որ ծնվը միայն նրան պէտք է տար:

Անծայր ապատի ամեն անկիւնում
Յուզմունք, ցաւ, շըփնթ, ատամի կրծնց.
Քար սիրտն է այնտեղ երկար զիմանում.—
Ծնվ, քեզ մօտ բերի սիրտս վիրախոց:

Երգեր, ծնվ, երգեր. ձայնիդ եմ կարօտ,
Քաղցրանոյշ ձայնիդ՝ լի թարմ աշխոյժով.
Երգեր, որ բուժուի իմ սիրտը վիրոտ
Եւ ճամբայ ընկնեմ նորոգւած ոյժով...

5. ՄԱՅՐԵՆԻ ԵՐԿՐՈՒՄ

... Եւ կէս գիշերին՝ մթում խարիսխամձ՝
Մի լեռան վէշին ևս դադար առի.
Անհողմոթիւնից քաղցրանոյշ արբած՝
Լոել էր վըսիմ սազմոսն անտառի:

Պինդ սեղմըւեցի մայր հողի կրծքին,
Երկար, անյագուրդ, ջերմ համբուրեցի.
Եւ ամբողջ գիշեր ականչ գըրեցի
Գաղթող խմբերի վշտոտ շշուկին:

Սև, զարհուրելի մղձաւանջի պէս՝
Գաղթն ամբողջ գիշեր չարչարեց հողիս.
Ու ճընշւեց ցաւից սիրտըս վշտակէզ,
Ու սնւզը լացի մայրենի հողիս...

Եւ արշալուսին, երբ այդը շողաց՝
Անցայ մխացող աւերակներից.
Բայց հրդեհւելով այն կըրակներից՝
Սըզապատ հոգիս այրւեց ու մխաց.

6.

Անցաւ զեփիւոն արշալուսին
Դաշտի կանաչ թաւիշով.
Ուշաթափւեց գժոյն լուսին,
Օրը զարթեց թարմ ոյժով:

Ու ցօղապատ արտ ու արօտ
Արեի տակ վառւեցին,
Բոլորն այնպէս անուշահնտ,
Կնդրուկի պէս լունկեցին:

Օրը եկաւ. շողուն հանդերձ
Լուս շրջակայքն ըզգեցաւ.
Սարը հըսկայ ու բարձրաբերձ
Հեռւում ժպատց, թարմացաւ.

Օրը երգեց այնպէս հնչուն —
Առաւոտեան աշխոյժով.
Իսկ ևս նորից ընկայ իմ չուն,
Լցւած նրա թարմ ոյժով .



7.

Թիշերն իջաւ լայն թևերով,
Կախւեց, մնաց անհրեր.
Կանուխ, կանուխ հոծ սկերով
Ծածկըւեցին լուռ սարեր:

Մութ է, ճամբայ չէ երեսւմ:
Բուն է լալիս սոսկալի...
Ահա հնչեց իմ ետևամ
Կանչը սոված չախկալի...

Ես չը գիտեմ՝ շատ պիտ գընամ,
Ո՞ւշ պիտ հասնեմ, թէ կանուխ.
Արդեօք ճամբիս մղջ պիտ մընամ,
Թէ պիտ կորչեմ ինչպէս ծուխ:

Ես չը գիտեմ. բայց քաջարի
Գնում եմ ես միշտ առաջ.
Իսկ ետեից ժըպիրհ չարի
Ախն եմ լսում ու հառաջ...

* *

Ես լաց եղայ հոնզուր-հոնզուր,
Ես ողբացի՝ սգաղղեց.
Սիրտս նորից մնաց թափուր,
Նորից եղայ դահընկեց:

Ու երբ օրւայ շողբը մեռաւ,
Զարթեց աշխարհն երազի,
Ինձ ցընորմունքն իր գիրկն առաւ,
Եւ՝ օրօրիած՝ հս ասի.—

Ազամզի սուրբ խորանին,
Սիրտ իմ, խոնարհ պլուխ առւր.
Հսկիր՝ երբէք չը շիջանին
Քո կերոններ բոցահուր.

Մոայլի դէմ ծաղբըդ նետիր,
Խաղաղ մնա—անսահման,
Ու կաց արթուն և ուշագիր
Համբ Անյայտի յանդիման...

ԱՇԹԻՂԼ

Մարալանջին կպած գիւղի
Մի բաց բակից ճռոռումուս
Սազն էր հնչում հայ աշուղի—
Մելամաղձոտ ու տիսուր:

Բունեղ կաղնու տակին նստած՝
Երգ էր սսում մի աշուղ։
Ամբոխը՝ լուս, շուրջը պատած՝
Լսում նըւագ սրտաբուխ։

Սազն էր խօսում, սազը լալիս,
Աշուղն երգում ցաւ ու գարդ։
Հնչում քաջի գովըն անելիս
Կորովաձայն ու հըպարտ։

Եւ այն երգում ամեն մի ձայն
Քաղցր էր, բնքոյշ, հոգհսփոժ։
Խումբն՝ ակնապիշ ու լըսելհայն՝
Ուշ էր դընում սրտաբով։

Աշուղն՝ անկարծ՝ երգը փոխեց,
Հնչեց մի շեշտ վըշաահեղ—
Թէ ձորն ինչպէս արիւն կոխեց,
Հուրը լափեց տուն ու տեղ։

Ինչպէս լեռներն ալ կապեցին.
Հանուր սուզով վիթխարի
Հոնդուր-հոնդուր արտասւեցին
Լուս կամարներն այբերի։

Ու նւազում, երգում էր նա
Սրախ խորքից ցաւագին,
Այնպէս, որ սիրտ չէր գիմանայ
Նրա հեծծուն նըւագին։

Ամբոխի հետ ինքն էլ՝ զսպւած՝
Լալիս էր նա կամացուկ
Եւ լարերին խփում յուղւած,
Երգում արխուր, սրտանձուկ...

Աշնան թախիծի տաճարը մըտայ
 Եւ բաղկատարած ծունը չողեցի.
 Քեզ բազմութեան մէջ յանկարծ ջոկեցի
 Քեզ իսկհյն գըտայ:

Ու գորշ վարագոյրն անլոյս տաճարի
 Յանկարծ վայր ընկաւ հրկու կէս եղած
 Եւ զարնան փայլի հեղեղը տեղաց —
 Կայտառ ու արի ..

Եւ էկստազի մէջ ոգիս մինուճար
 Բազմած է հիմա վըսեմ գագաթին
 Ու տեսնում է նա շղարշ ծիր կաթին,
 Որով դու իջար:

Եւ ըդգում է նա շունչդ վարդաբոյր,
 Եւ աղերսագին խնդրում է խօսել.
 Մենակ օրերի գետեր են հոսել —
 Ո՞, տուր ինձ համբոյր:

Երջ 32-ր էջ շրջ:

Ա. Դ. Օ Թ Ք

Երբ վհատութեան քայբայիչ ոգին
 Մեր սրտերի մէջ բոյն գնէ ըզգոյշ,
 Շնորհիր մեղ, Աստւած, այնպիսի մի ոյժ,
 Որ կարողանանք ներհակ հոսանքին
 Դիմադրել ուժգին:

Երբ մըրիկների պարը որոտայ,
 Երկինքը ծածկւի սոտաթոյր քօղով,—
 Մեր աստղը վառիր յուսափայլ շողով,
 Որ գէպի սուրբ գործ ամեն մարդ երթայ
 Ազմատ, անշղթայ:

Ու երբ զոհ գնանք վեհ ուխտի սիրուն,
 Մեր յետնորդների քաջ սրտերի մէջ
 Դու պայծառ վառիր այն կըրտկն անշէջ,
 Որ մեր գոյութեան ոգին աննըկուն
 Պահպանից տոկուն...

ՀԱՆԴԱԾ ԳԻՒՂԸ

Այս դալար հովտում, այս յաղթ լեռան տակ
Գիւղը՝ կենսալի՝ մի օրում մենջեց.
Լավլէզ հուրն անխնայ ամեն ինչ ջընջեց,
Եւ գիւղը դարձաւ արխուր վըլտառակ:

Հիմա այս վայրում ամայի՛, անտէ՛ր,
Մի սրտաճըմլի՛կ անդորր է տիրում:
Հողը ծաղիկներ էլ չէ արտադրում—
Բացնում է տատասկ ու վըլտիտ խոտեր:

Եւ աղբիւր, առու, ուր երանաւէտ
Երգնը են հնչել հայ աղջիկների,
Ուր սևստն է կապւել սիրահարների,—
Աշքաթող եղած՝ լոել են յաւէտ:

Լալիս է, կիզում իմ լըքած ոգին.
Ոչի՞նչ կենդանի... Մողէսն է միայն
Քարերի տակից դուրս սողում անձայն,
Անյագ քնքշանում կէսօրւայ շոգին:

Գիշերն էլ՝ անյոյս՝ սկ բուն է կանչում,
Նայում աւերին ապուշ հայեացըով.
Մերթ՝ խորհրդաւոր և շեշտ թըոփչըով՝
Չիղն է անշշուկ մութի մէջ կորչում...

ԽԱԻԿՐԻ ՄԵԶ

Գիշեր է, խաւար: Հզպայշ կաց, ընկեր.
Թանձըր զանգւածով մըշուշն է լողում.
Սուլում է քամին ահալի երգեր:
Հզպայշ. ոսոխի գաւերն են սողում:

Մեր շուրջն-աբհաւիրք: Հզպատ, անձանձիր
Հոկիր, որ յանկարծ չոստնէ չար ողին.
Հանգչող խարուկի թոյլ բոցն արծարծիր—
Թող յետ-յետ քաշւի մութն ահեղագին:

Եւ թող կաղկանձեն զայլերն արիւնոուշ՝
Սուր ժանիքների խխատ կըրճըտոցով.—
Շարաւ է նրանց որովայնն անկուշա
Մեր սրտի հիւթին՝ լի կեանքի բոցով:

Ինչպէս հիւանդի տագնապի ցնորք՝
Զի տեի երկար այս խաւարն անյոյս:
Թող քամին հրգէ մեզ մահւան օրօրք—
Մենք կը դիմանանք մինչեւ արշալոյս:

Բայց ըզգնյշ ընկեր, Դեռ մըւթ է, խաւար.
Մահերգ է ոսնում դիւահար քամին.
Հզպայշ, որ յանկարծ չառնէ մեզ աւար
Մեր արիւնարբն ոսնի թշնամին...

ԱՇԽԱՆԸ ԾՈՎԱՓԻՆ

Ափսրս, անցան, գնացին
Յոլքեր, փայլեր երկնածին.
Հողմը խիզախ թափերով
Անցաւ խոժոռ ափերով:

Կոհակն՝ ահեղ ցասկոտած՝
Ավին զարկեց—որոտաց.
Ճայը ճչաց սարսափից,—
Թռաւ, փախաւ բարսափից:

Մշուշն իջաւ ինչպէս գող,
Մարեց լոյսի ամեն շող
Եւ մոխրագոյն ծածկոցով
Վարագուրեց ափն ու ծով:

Ամրան ալիք ու եղերք,
Ծուփի անուշ, թովիչ երգ
Մնաս բարե ասացին,
Խոր սուզ մտան ու լացին...

ԱՇԽԻՆԸ

Պանդուխտ ամպերն ահա նորից
Ճամբայ ընկան լուռ ու մունջ.
Զիւնապլսակ գագաթներից
Ցուրտը հևաց դառնաշունչ:

Եւ չքացաւ մառախուղում
Ցնորտալի հորիզոն.
Շուրջն՝ կեանքի ահեղ թաղում,
Սուզի երգեր մօնօտոն:

Ամբողջ գիշեր թօնն է ծեծում
Լուսամուտիս ապակին,
Հողմն է լալիս ու հեծեծում
Անյուսօրէն, ցաւագին:

Ու ժանտ ոգին սև օրհասի՝
Մահասարսուռ խաւարում՝
Փառքն է երգում մահ—երազի,
Ծափ է տալիս ու պարում...

ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Քո ցասմունքից ահ առի
Փախայ մօտերքն անտառի.

Ահ առի

Ու փախայ,
Ինչպէս սրտուտ մի տղայ:

—Ասա, անտառ, դու գիտես,
Ո՞վ է իրաւն նա, թէ ես.

Դու գիտես

Երկուսիս.
Այստեղ փարեց նա վզիս...

Հովը սուրաց գէպի ձախ,
Բերեց հնչուն մի ծիծաղ.

—«Գէպի ձախ

Մի նայիր.
Օ՛, ներբէր ինձ, խընայիր»:

«Միթէ իրծք բարկացայ—
Քո համբոյրից խենթացայ.

Բարկացայ

Հանաքով.
Նստենք դարձեալ քովէքով»...

* * *

Կը գամ, կամաց կը բաղխեմ
Լուսամուտիդ ապակին,
Քո շրթերից կը քաղեմ
Սիրոյ համբոյր տապագին:

Ամբողջ գիշեր կը թափէ
Քո կաթնագոյն երեսին
Ցոլերն անբիծ սատափէ
Դժգունագէմ, հեղ լուսին:

Ամբողջ գիշեր իրար հետ
Կը զբուցենք խօսքընդհատ,
Մինչև լուսինն ուշաւէտ
Թիբուի գալուկ ու վըհատ:

Ու կը տիրէ լուսաբաց...
Դու սիրայեղց կը նիրհես.
Ես դուրս կը զամ սիրաբած՝
Հրաժեշտ-համբոյր ուալով քեղ...

ԱՅԻ ԾՈՎԻՆ

Դու թաւշեայ կապոյտնվ ժպտացիր հո-
գեթով
 Բայդարեան բարձունքին իմ զիմաց,
 Անտառով խընկարոյր քեզ հասայ, սքանչ-
 չաթոյր,
 Երբ արփին թագնըւեց շիկամած:

 Ողջ զիշեր եզերքիդ ուշ գրի վեհ երգիդ,
 Եւ հալեց շնչիդ մէջ իմ հողին.
 Ինձ անտես թևերով սըւացրիր եթերով
 Ու հասցրիս հըմայքիդ բարձունքին:

 Իսկ այզի լուս ժամին, երբ շնչեց զով
 բամին,
 Աւազիդ ջերմ համբոյը ալւեցի
 Եւ կայտան ու արե, անդորրով լսաների
 Դէպի նոր հեռուներ չըւեցի...

ԱՆՁԲԵԼԸ

Սահեց շպթան արծաթափայլ ամպերի,
 Տեսաւ վայրեր ապառաժուտ, անբերը.
 Ոլորելով՝ նայեց նրանց դարդասուզ
 Եւ լաց եղաւ, թափեց առատ արտասուզ:

Երբ ծածկոյթից ազատւեցին բարձունքներ,
 Շողլողացին բիւրեղի պէս արցունքներ.
 Վայրը նայեց խոր բերկրանքից լիացած,
 Սրծիւն անցաւ, վայրին նայեց հիացած:

Մեղմ ցոլքերով հրաժեղտ տալով ժայռերին,
 Արփին՝ շիկնած՝ հըպեց երկրի ծայրերին.
 Ամբողջ զիշեր ապշած զիտեց լուսնկան՝
 Ինչպէս շիթերն առկայծելով վայր ընկան...

Օրը վառեց... Զը կայ մի հետք ամպերի:
 Լուս են վայրերն՝ արևակէզ, անբերը.
 Խոժոռուելով վեր են նայում դարդասուզ
 Թէ երբ կը զայ կենդանաձիր արտասուզ...

Տուր ինձ մի համբոյր, և դուրս գանք
իսկոյն

Այս բազմութիւնից, որ պրկել է մեզ:
Սիրոյ նեկատարից շատ պէտք է խըմես—
Դու շատ ես դժգոյն...

Կը թողնեմ տաճարն աշնան թախիծի
Եւ քեզ հետ սիրոյ հովիտը կ'երթամ.
Ու կը նըւիրեմ քեզ հոգիս փարթամ,
Առանց մի րիծի...

* * *

Սև, դարանակալ գիշերն է կախւած...
Աջ կողմըս՝ լեռներ սեպ ու բարձրունակ,
Զախից՝ անդունդի երախն է բացւած,—
Եւ գլնում եմ ես յառաջ, միշտ մենակ:

Ես պէտք է գընամ ու գլնամ անշեղ
Եւ խաչըս տանեմ մինչև Գողգոթա.
Ոչինչ, եթէ՝ մութն ըսպանայ ահեղ
Ու գնու փոթորիկն ուժգին որոտայ:

Եւ իսկի փոյթ չէ, թէ առաւօտեան
Ես խաչւած լինեմ լեռան կատարին,
Միրայն տեսնէի արփին յաղթութեան
Պայծառ շողալիս տանջւած աշխարհին...

* * *

Քո դռան առաջ առւակն է հոսում
Սարերի այգի անդուրի միջին
Եւ նրա դիւթիչ հեքիաթն է լսում
Եղերի մենակ, վայելուչ փիճին:

Յանկարծ խրճիթիդ դուռն է ճրճուռ,
Դու զուրս ես գալիս, գնում դէպ առաւակ,
Զովացնում երեսդ անապակ ջրում
Եւ երգում այգի երկնային նւագ:

Քեզ հվ է տւել և հիասքանչ կոյս,
Բաղդը՝ սարերի աղջիկ լինելու:
Երնէկ քո կեանքին՝ ազմտ ու անյոյդ.
Երնէկ քեզ՝ միայն սրտիդ ես հըլու:

Իսկ ես՝ քաղաքի մշտահոգ որդիս,
Պրկւած եմ հաղար անտես օղակով.—
Անզօր, թևազորկ՝ ես կեանք—թակարդիս
Մէջն եմ թվրառում զուսպ աղաղաչով...

Հ Տ Պ Ի Տ Ի Ն


Ես գիտեմ քո հոգին, և հտպիտ...
Խնդացրն աօնօրեայ ամբոխին.
Երեսիդ միշտ ծիծաղ ու ժպիտ՝
Դու ասա ինչ որ գայ քո գլխին,

Խեղճ հտպիտ. ձևացիր ու կեղծիր:
Թող ամբոխն՝ անսալով քո խօսքին՝
Ծիծաղէ, քեզ դիտէ անձանձիր
Եւ թափէ քո առաջ իր ոսկին:

Թող հոգիդ ցաւ, կսկիծ միշտ կըբէ
Ու՝ ջարդւած՝ գթութիւն մրմնջայ.—
Խըլացրն դու նրան. Թող լըոէ.—
Ծիծաղիր, խեղճ հտպիտ, քրքջա:

Հարազատ էակնել դու թաղիր,
Բախտն անգութ թող իսպառ քեզ քանդէ,
Բայց դարձեալ խնդացրն, ծիծաղիր,
Քրքիջով խեղճ հոգիդ աւանդէ...

Vae infelicibus!



Դընա, նիստ ափին ու՝ վշտակալած
Կոյր բախտիդ վրայ տնըսփոփ դու լաց.
Փրփուր-ջըրի հետ արցունքդ խառնիր
Եւ նզովք կարդաչ աշխարհին նանիր:

ԵՇ սարի գագաթն ու ազատ քամուն
Շանթ-խօսքով պատմիր կըսկիծըդ անհուն.—
Լուրը կը թոշի աշխարհից աշխարհ,
Բայց վիշտդ դարձեալ կը մնայ վիթխար:

Չոր անտպատի սմբած ժայռերին
Ճոյց տուր հէք սրտիդ խոցերը խորին:—
Լեզու կը ստանան և չեն դիմանայ.
Նրանք կը կանչեն—մէկը չ'իմանայ:

Եւ այնուհետեւ մի խորհիր երկար.
Դիմացդ միայն մոխիր է ու քար:
Թէ կ'ուզես ապրել—սողա, մարտընչիր,
Թէ մեռնել կ'ուզես—ժամ առաջ կորչիր...



ԴԻՆԵ Է 25 409.

ՀՀ Ազգային գրադարան



NL0323783

22850